

Սարգիս Ռ. Ավետյան
Բանասիր. գիյր. թեկնասծու

ԿՈՒ (ԿՐ) ՄԱՄՆԻԿՈՎ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Համաժամանակյա և տարաժամանակյա քննություն*

Քանալի բառեր – կու (կը) մասնիկով կազմություններ, սովորության և պատմական ներկայի իմաստներ, հայերենի բարբառներ, մնացորդային կիրառություններ, ներկա ժամանակի **-ում** դերբայավոր ձևեր, ընթացքային կերպի ձև, տիպաբանական տվյալներ:

Մուտք

Հայտնի է, որ հին հայերենի սահմանական ներկան արդեն 5-րդ դարում հաճախ էր գործածվում նաև ներկա ստորադասականի և աորիստ ստորադասականի¹ իմաստներով: Ա. Այտընյանը, հաշվի առնելով սահմանական ներկայի այդպիսի կիրառությունների առավել հաճախադեպ խոսքային իրադրությունները, գտնում է, որ դրանք բնորոշ են եղել հատկապես առօրյա-խոսակցական լեզվին: Նրա կարծիքով՝ «...մանաւանդ դէմ առ դէմ խօսակցութեանց մէջ գործածուած այսպիսի ներկայից յաճախութեանը միտ դնելով՝ մտածել պէտք կ'ըլլայ թէ նոյնը շատ հնուց ի վեր եւ շատ սովորական կամ թէ բուն գործածականն եղած ըլլայ ընտանեկան հայերէն լեզուին»²: Նա նույն միտքն արտահայտում է նաև մեկ այլ ձևա-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 06.11.2021:

1 Ներկա ստորադասական (present subjunctive, Konjunktiv präsens) և աորիստ ստորադասական (aorist subjunctive, Konjunktiv aorist) եզրույթների գործածության հարցում մենք հետևում ենք եվրոպացի հայերենագետներին (հմմտ. Meillet A., Altarmenisches Elementarbuch, Heidelberg, 1913, էջ 92-107, Jensen H., Altarmenische Grammatik, Heidelberg, 1959, էջ 91-100, 114-118, Godel R., An Introduction to the Study of Classical Armenian, Wiesbaden, 1975, էջ 37-38): Այդ եզրույթները, մեր կարծիքով, ավելի ճիշտ են արտացոլում տվյալ եղանակաժամանակային ձևերի էությունը, թեև սկզբնական դրությունն արդեն 5-րդ դարում զգալիորեն խախտված էր: Սակայն հայ քերականագիտության մեջ այժմ ընդունված են **ստորադասական առաջին ապառնի** և **ստորադասական երկրորդ ապառնի** անվանումները: Իսկ ավելի վաղ գրաբարի քերականները աորիստ ստորադասականը դիտում էին իբրև սահմանական եղանակի ապառնի՝ բուն ստորադասական համարելով միայն ներկա ստորադասականը (հմմտ. Ավետիսյան Հ., Գրաբարի ստորադասական եղանակը և նրա ըմբռնումը հայ քերականության պատմության մեջ, «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 1985, N 1, էջ 193-204):

2 Այտընյան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Կիեմնա, 1866, մաս (1-ին)՝ Նախաշաղիղ, էջ 99: Հմմտ. նաև էջ 114, ծան. 109 և մաս (2-րդ)՝ Քերականություն արդի հայերեն լեզուի, էջ 74:

կերպամամբ. «Մտադրութեան արժանի բան մըն է որ այս կերպ ապառնին կամ ստորադասականը դէմ առ դէմ խօսակցութեանց համար կը բանեցընէին հին նախնիք»³:

Եթե հաշվի առնենք, որ հին հայերենի ստորադասականի ձևերը արդի բարբառներում հետք չեն թողել, այդ հանգամանքը թերևս կարող է բացատրվել այն բանով, որ դրանք խոսակցական լեզվում իրոք գործածությունից դուրս են եկել և ներկայի ձևերով փոխարինվել բավական վաղ շրջանում: Ինչպես նկատում է Յ. Կարստը, միջին հայերենում «հին ստորադասականի և ապառնիի (այն է՝ ներկա ստորադասականի և աորիստ ստորադասականի – Ս. Ա.) միայն առանձին հետքեր են հանդիպում կայուն բանաձևերում և որպես հնաբանություններ»⁴: Լեզվի հետագա զարգացման ընթացքում հինհայերենյան սահմանական ներկայի՝ ստորադասականի իմաստով կիրառությունը ի վերջո տիրապետող է դառնում, իսկ սահմանական ներկայի համար նոր ձև է կազմվում **կու** մասնիկի և գրաբարյան ներկայի ձևի հարադրությամբ: Արդեն միջին հայերենում **կու**-ով ձևը հիմնականում գործածվում է սահմանական եղանակի, իսկ **կու**-ից զուրկ ձևը՝ ստորադասականի կամ ստորադասաբղձականի իմաստով⁵: Իհարկե, **կու**-ով ձևը արտահայտում է ոչ միայն սահմանական ներկայի (և անցյալ անկատարի), այլև ապառնիի իմաստ⁶, սակայն հայտնի է, որ ապառնիի իմաստ արտահայտելը **կու**-ով ձևի առաջնային գործածությունը չի եղել⁷: Հետագայում **կու (կը)**-ով կազմությունները բարբառների **Կը** ձյուղում պահպանում են միջինհայերենյան իրենց երկու գործառնությունները՝ սահմանական ներկայի և ապառնիի իմաստները⁸: Մինչդեռ արևելահայերենում (**ոււմ** ձյուղ) **կու (կը)**-ով ձևերը հիմնականում հանդես են գալիս ապառնիի իմաստով, իսկ սահմանական ներկայի իմաստն արտահայտվում է **ոււմ**-ով (բարբառների մեկ այլ խմբում՝ **լիս/ս**-ով) դերբայավոր ձևերով⁹: Այդուհանդերձ, **կու (կը)**-ով ներկայի ձևեր վկայված են նաև **ոււմ**-ով (և **լիս/ս**-ով) ներկայի ձևեր ունեցող մի շարք բարբառներում և ժողովրդախոսակցական արևելահայերենում: Ու թեև հետազոտողներից ոչ մեկը արևելահայերենում **ոււմ**-ով ներկային զուգահեռ **կու (կը)**-ով ներկայի ձևերի առկայությունը չի ժխտում, սակայն դրանք հայերենագիտության մեջ մեկնաբանվում են ոչ միանշանակ: Սույն հոդվածում արևելահայերենի **ոււմ**-ով և **կու (կը)**-ով ներկայի ձևերի պատմական փոխհարաբերությունը և համաժամանակյա

3 Նույն տեղում, մաս (2-րդ)՝ Քերականութիւն...., էջ 74:

4 Karst J., Historische Grammatik des Kilikisch-Armenischen, Strassburg, 1901, S. 299.

5 Տե՛ս նույն տեղում, էջ 299-305: Հմմտ. Այտղնեան Ա., նշվ. աշխ., մաս (2-րդ)՝ Քերականութիւն...., էջ 75, Զահուկյան Պ., Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցերը, «Համազգային», 2000, էջ 303:

6 Տե՛ս Karst J., նշվ. աշխ., էջ 305-306:

7 Տե՛ս Զահուկյան Պ., Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցերը, էջ 303-305:

8 Տե՛ս Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. IV, Բ գիրք, Եր., 1961, էջ 87, Ղարիբյան Ա., Հայ բարբառագիտություն, Եր., 1953, էջ 175:

9 Տե՛ս Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 87, Ղարիբյան Ա., նշվ. աշխ., էջ 162 հջ.:

իմաստագործառնությանին բաշխումը դիտարկվում են լեզվաբանական տիպաբանության տեսանկյունից:

1. Արևելահայերենի **կու (կը)**-ով ներկայի ձևերի մասին առկա տեսակետները

Հ. Աճառյանը ժամանակին մի ուշագրավ դիտարկում է արել: Խոսելով հայերենի **Կը** և **Ում** ձյուղերում *կու (կը)*-ով ձևի գործածությունների մասին՝ նա գրում է. «**Ում** ձյուղի մեջ նա ապառնիի նշանակություն միայն ունի և ներկա չէ: Բայց եղել է ժամանակ, երբ **Ում** ձյուղի մեջ էլ նա գործածվել է իբր ներկա **միայն** և այդ պահվում է մինչև այժմ էլ **պատմական ներկայի** ձևով: Դրա համար է, որ վերը **կը** ձևով ներկայի համար ասացի, թե նա տարածված էր **բովանդակ** հայության մեջ (ընդգծումը հեղինակինն է – Ս. Ա.)»¹⁰: Ցավոք սրտի, Հ. Աճառյանի այս կարևոր դիտարկումը հայերենագիտության մեջ լայն ուշադրության չի արժանացել, և դրան անդրադարձել են միայն որոշ հետազոտողներ: Այսպես, Գ. Գևորգյանը, ընդունելով Հ. Աճառյանի վերոնշյալ տեսակետը և հաշվի առնելով հայերենի որոշ այլ փաստեր, գտնում է, որ հայերենի բարբառները պատմականորեն նախ բաժանվել են **Լ** և **Կու** ձյուղերի, իսկ հետագայում **Կու (Կը)** ձյուղի ներսում տարբերակվել են այժմյան **Ում** և **Կը** ձյուղերը¹¹: Մինչդեռ, օրինակ, Ռ. Իշխանյանը Հ. Աճառյանի նշված տեսակետի մասին գրում է, որ «...ամայժմ այդ վարկածը փաստող նյութ չկա...»¹²: Մյուս կողմից՝ արևելահայերենում **ում**-ով ներկայի հիմնական ձևերին զուգահեռ **կու (կը)**-ով ձևերի գործածությունը ընդհանրական, սովորությանին և պատմական ներկաների իմաստով երբեմն պարզապես արձանագրվել է որպես փաստ՝ առանց որևէ մեկնաբանության¹³, երբեմն էլ **կու (կը)**-ով ներկայի ձևերը դիտվել են որպես **Կը** ձյուղի ազդեցության¹⁴ կամ նախկինում **Կը** ձյուղին պատկանող բարբառի՝ հետագայում **Ում** ձյուղին անցնելու¹⁵ արդյունք: Իսկ Ռ. Իշխանյանը 17–18–րդ դդ. նոր հայերենում **ում**-ով և **կու (կը)**-ով կազմությունների զուգաձևությունը դիտում է որպես դեռ միասնական և նոր-նոր երկփեղկման միտում ցուցաբերող աշխարհաբարի շրջանում արևելյան (**ում**-ով) ու

10 Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 87:

11 Տե՛ս Գևորգյան Գ., Ներկա ժամանակի պատմական զարգացման հարցի շուրջ, «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 1987, N 10, հատկապես էջ 42, 44:

12 Իշխանյան Ռ., Նոր գրական հայերենը XVII-XVIII դարերում, Եր., 1979, էջ 66:

13 Տե՛ս, օրինակ, Տահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972, էջ 105, Կոստանդյան Դ., Նախիջևան, Շուռուք գյուղ, Հայերենի բարբառագիտական առկախ անտիպ նյութեր, տետր 212:

14 Հմմտ. Եզեկյան Լ., Գրական աշխարհաբարը և արևելահայ պատմավեպի լեզուն (19-րդ դար), Եր., 1990, էջ 162, նաև էջ 37:

15 Տե՛ս Կասովայան Վ., Բայագետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ, Եր., 2016, էջ 423, նաև էջ 399-400: Միննույն ժամանակ Վ. Կասովայանը գտնում է, որ «Բայագետի բարբառում ում վերջավորությամբ դերբայը արդյունք է ոչ թե համակարգի ինքնուրույն զարգացման, այլ Արարատյան բարբառի ազդեցության» (նույն տեղում, էջ 399):

արևմտյան (**կու (կը)**-ով) ձևերի չտարբերակված համատեղ գործածություն: Սակայն նա **կու (կը)**-ով և **ուսմ**-ով ձևերի իմաստագործառության վերլուծություն չի կատարում, այլ պարզապես նշում է, որ 17-րդ դարում **կու (կը)**-ով ներկայի ձևերը ակնհայտորեն գերակշռում են, մինչդեռ 18-րդ դարում **ուսմ**-ով ներկայի ձևերը նույնպես արդեն զգալի գործածություն ունեն¹⁶: Նույնիսկ Յ. Շրյոդերի «Արամեան լեզուին գանձի» (այսուհետ՝ «Գանձ»)՝¹⁷ աշխարհաբար նմուշների լեզվի վերաբերյալ (որտեղ **ուսմ**-ով ձևերը, մեր դիտարկումների համաձայն, գործածված են ընթացքային ներկայի, իսկ **կու (կը)**-ով ձևերը՝ միայն ընդհանրական, սովորությանին ներկայի և ապառնիի իմաստներով, մի հանգամանք, որը, որքանով մեզ հայտնի է, դուրս է մնացել հետազոտողների ուշադրությունից) Ռ. Իշխանյանն ընդամենը գրում է, որ «շատ կա **կու (կը)**-ով համադրական ներկա, բայց արդեն զգալի տեղ ունի զուտ արևելահայ հարադրական (այն է՝ **ուսմ**-ով – Ս. Ա.) ներկան...»¹⁸: Իսկ Կ. Սարաֆյանի «Գիրք, որ կոչի բանալի գիտութեան» (1788 թ.) գրքի առիթով Ռ. Իշխանյանը նկատում է, որ «բոլորովին չկա բայի **կու (կը)**-ով համադրական ներկա (կամ անցյալ անկատար), բոլոր ներկաները արևելյան բարբառներին հատուկ վերլուծական ձևով են կազմված...»¹⁹: Բայց կուզենայինք նշել, որ թեև Կ. Սարաֆյանի գրքում գետեղված գրույցների լեզվում **ուսմ**-ով ներկայի ձևերը գերակշռում են, իսկ **կու (կը)**-ով ձևերը հիմնականում ապառնիի իմաստով են գործածված, այդուհանդերձ, մեզ հաջողվել է գտնել **կու (կը)**-ով ընդհանրական ներկայի մեկ անհերքելի օրինակ. «**Կուսիրես հրամանքդ ինգլիզի փիվա** – Любите ль вы английское пиво?» (էջ 250)²⁰: Բացի այդ՝ հանդիպում են նաև գրաբարատիպ ներկայի մի շարք ձևեր թե՛ ընթացքային ներկայի և թե՛ ընդհանրական, սովորությանին ներկայի իմաստով, օր.՝ «**Վասն էր այդպես շուտ ճաշեն այսօր**» (էջ 248), «**Ես ոչ ըմպեմ կարմիր գինի ես լաւ սիրեմ ըսպիտակն**» (էջ 249), «**Ես հրամանոցդ խոստանամ միշտ լինիլ աշխատասէր**» (էջ 254-255), «**Ես խնդրեմ օգնել ինձ...**» (էջ 256):

2. Տիպաբանական ընդհանուր օրինաչափությունները և **կու (կը)**-ով ներկայի ձևերի գործառությանին բաշխումը

Հնարավոր է, որ արևելահայերենում **ուսմ**-ով (և **լիս/ս**-ով) և **կու (կը)**-ով ներկայի ձևերի զուգաձևությունը որոշ դեպքերում պայմանավորված

16 Հմմտ. Իշխանյան Ռ., նշվ. աշխ., էջ 45-67, 84, 91, 109, 119-121:

17 Նկատի ունենք «Schröder J. J., Thesaurus linguae Armenicae (Արամեան լեզուին գանձ), Amstelodami, 1711» գրքում ներառված աշխարհաբար («քաղաքացիական հայերենով») նմուշները:

18 Իշխանյան Ռ., նշվ. աշխ., էջ 121:

19 Նույն տեղում, էջ 133:

20 Այս և հետագա շարադրանքում փակագծերում նշվում են Կ. Սարաֆյանի «Գիրք, որ կոչի բանալի գիտութեան» (Սանկտպետերբուրգ, 1788) գրքի միայն համապատասխան էջերը:

է տվյալ բարբառի միջձյուղային բնույթով²¹ կամ էլ շրջակա բարբառների ազդեցությամբ: Բայց կարծում ենք՝ ճիշտ չէր լինի բոլոր դեպքերն այդ կերպ բացատրել, եթե հաշվի առնենք, որ ժողովրդախոսակցական արևելահայերենում և մի շարք բարբառներում, որոնցում ներկայի հիմնական ձևերն ունեն դերբայավոր կառուցվածք, տիպաբանական շատ կարևոր օրինաչափություն է գործում. **կու (կը)-ով ձևերը, որպես կանոն, ընթացքային ներկայի իմաստ չեն արտահայտում, այլ ապառնի իրենց բուն իմաստին գուգահեռ գործածվում են միայն պատմական, պատմողական ներկայի և/կամ ընդհանրական, սովորության ներկայի իմաստով**²²: Ի դեպ, **կու (կը)-ով** ներկայի գործածություն է ամկա որոշ «բարբառների հին վկայություններում (հմնտ. Աստրախան) և հեթիաթների պատմողական ներկայի գործածություններում (Աստապատ, Էջմիածին և այլն)»²³:

Մեր կարծիքով՝ տարածամանակյա տիպաբանական ընդհանուր օրինաչափությունները նոր լույս են սփռում արևելահայերենում դերբայավոր (**ում-ով**) և մասնիկավոր (**կու (կը)-ով**) ներկայի ձևերի պատմական փոխհարաբերության և դրանց համաժամանակյա իմաստագործառության առանձնահատկությունների վրա՝ հաստատելով Հ. Աճառյանի վերոնշյալ վարկածը: Այսպես, լեզվաբանական տիպաբանությունից հայտնի է, որ երբ քերականացման եղանակով նոր ընթացքային ներկայի ձև է առաջանում, հին ներկայի ձևը կան անհետանում է, կան էլ ավելի հաճախ գործառության սահմանափակման է ենթարկվում: Այսինքն՝ երբ նոր ընթացքային ձևը դառնում է պարտադիր, հին ձևը սահմանափակվում է սովորության, ընդհանրական ներկայի և ապառնի կիրառություններով: Հետագայում այդ նոր ընթացքային ձևը կարող է ձեռք բերել նաև սովորության, ընդհանրական ներկայի իմաստ և այդ գործածությամբ ևս դառնալ պարտադիր: Այդ դեպքում հին ձևը սահմանափակվում է ապառնի կիրառությամբ²⁴: Մյուս կողմից՝ երբ ընթացքային ներկայի ձևը ձեռք է բերում նաև ընդհանրական, սովորության ներկայի գործառությամբ, հին ձևը դեռ երկար շարունակում է գործածվել պատմական, պատմողական ներկայի իմաստով, եթե նույնիսկ այդ հին ներկայի ձևն արդեն դուրս է մղվել իր հիմնական իմաստագործառական դաշտից և փոխարինվել նոր ձևով: Այդ առումով հատկապես պահպանողական է բանահյուսական ժանրը (հե-

21 Հմնտ. **Պարիզյան Ա.**, նշվ. աշխ., էջ 217:

22 Հմնտ. **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., էջ 87, **Զահուկյան Պ.**, Հայ բարբառագիտության..., էջ 105, **Աբրահամյան Ա. Պ., Պառնասյան Ն. Ա., Օհանյան Հ. Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, հատ. 2, Ձևաբանություն, Եր., 1974, էջ 394, **Կատվկայան Վ.**, Բայագետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ, էջ 423 և այլն:

23 **Զահուկյան Պ.**, Հայ բարբառագիտության..., էջ 105:

24 Տե՛ս **Haspelmath M.**, The Semantic Development of Old Presents. New Futures and Subjunctives without Grammaticalization, "Diachronica", 15:1, 1998, էջ 34-35, նաև էջ 48-49: Հմնտ. **Bybee J., Perkins R., Pagliuca W.**, The Evolution of Grammar. Tense, Aspect, and Modality in the Languages of the World, Chicago-London, 1994, էջ 275-277:

քիաթներ, առակներ, ասացվածքներ), որտեղ հին ներկայի ձևերը սովորաբար հանդես են գալիս որպես պատմողական ժամանակներ²⁵:

3. Կու (կը)–ով ներկայի ձևերի մեկնաբանումը տիպաբանական տվյալների լույսի ներքո

Կարծում ենք՝ արևելահայերենում **կու (կը)**–ով կազմությունների՝ պատմական ներկայի իմաստով գործածությունը վերոնշյալ տիպաբանական ընդհանուր օրինաչափությունների տեսանկյունից ոչ այլ ինչ է, քան նախկին բազմագործառույթ ներկայից պահպանված մնացորդային կիրառություն: Նմանապես **կու (կը)**–ով ձևերի՝ ընդհանրական, սովորության ներկայի և ապառնիի իմաստներով կիրառությունները ակնհայտորեն վկայում են այդ ձևերի՝ նաև ընթացքային ներկայի իմաստով երբեմնի գործածության մասին: Ուստի միանգամայն հավանական է, որ արևելահայերենում ևս **կու (կը)**–ով ձևերը սկզբնապես գործածվել են ներկայի բոլոր հիմնական իմաստներով, այդ թվում՝ ընթացքային ներկայի իմաստով: Ըստ այդմ՝ ընդհանրական, սովորության և պատմական ներկայների իմաստները երբեմնի բազմագործառույթ ներկայից պահպանված մնացորդային կիրառություններ են:

Հայերենի տարածական և ժամանակային տարբեր դրսևորումներում **ում**–ով և **կու (կը)**–ով ձևերի իմաստագործառույթային փոխհարաբերության համակողմանի քննությունը թողնելով ապագային՝ ստորև կփորձենք այդ տեսանկյունից վերլուծության ենթարկել **ում**–ով և **կու (կը)**–ով ձևերի գործածությունները հատկապես «Գանձի» աշխարհաբար նմուշներում, որոնք, լինելով արևելահայ բարբառով կենցաղային երկխոսություններ ու զրույցներ, արտացոլում են ժողովրդական խոսքի բնական լեզվավիճակը: Արդեն նշվեց, որ այդ նմուշներում **ում**–ով (**գալ, տալ** բայերի դեպքում՝ **լիս**–ով) ձևերը գործածված են ընթացքային ներկայի, իսկ **կու (կը)**–ով ձևերը՝ միայն ընդհանրական, սովորության ներկայի և ապառնիի իմաստներով: Բերենք օրինակներ:

«...ինչ ձանապարհէ ես գալիս» (էջ 338)²⁶: «Մեր երկրէն եմ գալիս» (էջ 338): «...ես գնում եմ ձեր դաստուրով՝ զարա իրիկունս պիտի գնամ վանքն...» (էջ 368): «...էնդունք ով են, որ... ծաղիկ են քաղում» (էջ 363): «...Ղազարն եկաւ ասաց Աղէն կանչում այ» (էջ 347): «...ինչ էք խօսում պարզ խօսեցէք...» (էջ 354): «Պարոն Տիրատուր քո հրամանքդ հաց չես ուտում (հացկերույթի ժամանակ – Ս. Ա.)» (էջ 352): «...պարոնայք

²⁵ Տե՛ս Haspelmath M., նշվ. աշխ., էջ 48–49, նաև Bybee J., Perkins R., Pagliuca W., նշվ. աշխ., էջ 147–148: ²⁶ Այս և հետագա շարադրանքում փակագծերում նշվում են «Գանձի» միայն համապատասխան էջերը:

խմումեն Ած մեր խեղճ ազգին ողորմի (կենաց ասելիս – Ս. Ա.)» (էջ 362): «**Պրն Առաքել....., դեռ հաց չենք կերել՝ դու ուզումես աշխարհս քննես**» (էջ 353) և այլն:

Բերված բոլոր օրինակներում դերբայավոր ներկայի ձևերը գործածված են ընթացքային ներկայի իմաստով: Բայց հետևյալ երկու օրինակներում **ուժ**-ով կազմություններով արտահայտված գործողություններն ընդգրկում են ոչ թե բուն խոսելու պահը, այլ ավելի մեծ ներկա ժամանակահատված. հմմտ. «**Խ. Թոռներդ ինչ բանի վերայ են: Տ. Երկու թոռնս վանքում կարդումեն... աղջկերաց մինն անապատում կուսանաց մօտ ասղագործութիւն այ սովորում**» (էջ 363-364): Այդուհանդերձ, դրանք ևս կարող են դիտվել որպես ընթացքային ներկայի դրսևորումներ, եթե հաշվի առնենք, որ գործողության՝ ընթացքի մեջ լինելը տիպաբանորեն կարող է ըմբռնվել նաև լայն առումով: Այսինքն՝ տվյալ գործողությունը կարող է բուն խոսելու պահին իրապես ընթացքի մեջ չլինել, այլ որպես մեկ տևական գործընթաց ընդգրկել ավելի լայն ներկա ժամանակահատված, որի մեջ իհարկե մտնում է նաև խոսելու պահը²⁷:

Ինչ վերաբերում է **կու (կը)**-ով ձևերին, հատկանշական է, որ դրանք, ինչպես նաև դրանց՝ **չեն օժանդակ բայ + անորոշ դերբայ** կազմությամբ ժխտականի ձևերը այդ աշխարհաբար գրույցներում գործածված են միայն ընդհանրական, սովորությանի ներկայի և ապառնի իմաստներով, բայց **կու (կը)**-ով ձևերից ոչ մեկը ընթացքային ներկայի իմաստ չի արտահայտում. հմմտ. «**Տեղս շատ կումնաս:թէ որ ծախս յետացաւ ընկերիս մօտ ապրանքս կուրողնում.... տուն կերթամ**» (էջ 344, ապառնի): «**Ես կուտեմ.... գինի սվէք թէ չէ գառն կուսաղանայ**» (էջ 352, ապառնի): «**Ֆ.ինչպես դուք երեխայքն կումկրտէք: Ք. Յառէջ երեխայն կնքաօր գիրկն կուտանք.... յետոյ.... երեխայն կառնունք աւագանին վերայ կուրնենք.... և բովանդակ մարմինն կուլուանանք....**» (էջ 328, ընդհանրական, սովորությանի ներկա, այսուհետ՝ ընդհ., սվրթ. ն.): «**....համիշա եկեղեցական սահմանքն կարգն կուփոխեն**» (էջ 326, ընդհ., սվրթ. ն.): «**....էս բոլոր Ասիու երկրումս ամէնն կուհաւատան և ունին եօթն խորհուրդ եկեղեցոյ**» (էջ 327, ընդհ. ն.): «**Պահքն է՛ երբ մսեղէն.... ձկնեղէն և հաւկիթ չենք ուտել**» (էջ 335, ընդհ., սվրթ. ն.): «**....երկրէն դուրս չեն գնալ մա դուքանումն նստած.... ճոթ կուծախսեն....**» (էջ 342, ընդհ., սվրթ. ն.): «**Ծոմն է՛ երբ առաւօտէն մինչև իրիկուն ոչ կուտենք և ոչ խմենք**» (էջ 335, ընդհ., սվրթ. ն.) և այլն: Վերջին օրինակում **կու (կը)**-ով ներկայի ձևը գործածված է գրաբարատիպ ներկայի ձևի հետ: Առաջին հայացքից կարող է թվալ, թե տվյալ դեպքում գործ ունենք ոչ թե բուն գրա-

27 Տե՛ս Bybee J., Perkins R., Pagliuca W., նշվ. աշխ., էջ 136-137:

բարատիպ ներկայի, այլ **կու (կը)** մասնիկի՝ համատեքստային և գործաբանական պայմանավորվածություն ունեցող բացթողման հետ: Մանավանդ որ գրաբարատիպ ներկան այլ դեպքերում էլ հաճախ հանդես է գալիս միևնույն բարդ կամ բազմաբարդ նախադասության կազմում **կու (կը)**-ով ներկայի ձև(եր)ի հետ միասին. հմնտ. «**Երբ որ շատվոր են...., կարավան կուղառնան.... ապրանքն ուղտերն, ձի կամ ջորի կուրառնան, և.... կուգրնան, ու ամէնքն Քեարվանբաշու հրամանան աստ կամ անդ իջևանեն.... ինչ տեղ որ կուզեն վրան և չատիր կուտան, և իրեանց պէտքն կամ կարիքն լիալի կատարեն, յետոյ իրեանց ճանապարհն յառաջ գնան**» (էջ 343, ընդհ., սվրթ. ն.): Ուստի թերևս կարելի էր մտածել, որ նույն նախադասության կազմում մեկից ավելի **կու (կը)**-ով ձևերի առկայության դեպքում **կու (կը)** մասնիկը կարող է բաց թողնվել այդ ձևերից մի քանիստում: Սակայն նկատենք, որ գրաբարատիպ ներկան տեղ-տեղ գործածված է նաև առանց **կու (կը)**-ով ձևի և հիմնականում դարձյալ ընդհանրական, սովորության ներկայի, բայց երբեմն՝ նաև ընթացքային ներկայի իմաստով. հմնտ. «**Մեք կարծենք թէ.... Քրիստոնեայ չկայ....**» (էջ 330): «**....էդ պատճառէդ բնակին ի վանքերում....**» (էջ 331): «**....չորս հայրապետ ունինք, որ ոմանք Պատրիարզ և Կաթողիկոս ասեն**» (էջ 332): «**....և ոչ ինչպես Կրետացիքն բանաստեղծեն....**» (էջ 336): «**....խնդրեմ որ ասես ինձ....**» (էջ 336) և այլն: Բացի այդ՝ գրաբարատիպ ներկան **կու (կը)**-ով ներկային զուգահեռ հանդիպում է 17-18-րդ դդ. նաև այլ հեղինակների երկերում: Վերն այդ մասին խոսվեց Կ. Սարաֆյանի գրքի առիթով: Այդպես էլ գրաբարատիպ ներկան **կու (կը)**-ով և **ում**-ով ներկաներին զուգահեռ հանդես է գալիս Ս. Դաշտեցու բանաստեղծություններում, ով ապրել ու գործել է 17-րդ դարի երկրորդ կեսին և 18-րդ դարի առաջին քառորդին²⁸. հմնտ. «**Ողջ հաւանեն իրեանց խելքին....**» (էջ 108)²⁹: «**Թշնամին ջանայ խզել....**» (էջ 108): «**Քանի հայ այ տան («տալիս են» – Ս. Ա.) պատէ պատ: Ով քուրդացաւ՝ ագաթն է շատ....**» (էջ 116): «**Երբ բան ունեն՝ ոտաց հողան, Դէմ դէմ կանգնեն սուտ սուտ դողան, Յերբ պծանեն զօթ տան սողան....**» (էջ 116, ընդհ., սվրթ. ն.): Ուստի ավելի հակված ենք կարծելու, որ բարդ նախադասության կազմում նույնպես գրաբարատիպ ներկայի ձևն է գործածվում **կու (կը)**-ով ներկայի ձևին զուգահեռ:

Ի դեպ, կարելի է ենթադրել, որ **կու (կը)**-ով ներկայի և գրաբարատիպ ներկայի ձևերի զուգահեռ գործածությունը հետագայում հայերենի որոշ տարածական տարբերակներում դարձել է կանոնիկ: Թերևս դրա արդյունքն է այն, որ այժմ մի շարք խոսվածքներում ներկա ժամանակը, զուտ

28 Հմնտ. Աբրահամյան Ռ., Ստեփանոս Դաշտեցի, «Տեղեկագիր» հաս. գիտ., Եր., 1956, N 12, էջ 102:
 29 Այս և հետագա շարադրանքում Ս. Դաշտեցու բանաստեղծություններից բերվող օրինակների համար փա-
 կագծերում նշվում են Ռ. Աբրահամյանի նույն հոդվածի համապատասխան էջերը:

համաժամանակյա-նկարագրական բնորոշմամբ, կազմվում է «կր/կ մասնիկով կամ առանց դրա՝ **կրխաքին, կէթամ, խօսանք**»³⁰, թեև որոշ դեպքերում այդպիսի զուգաձևությունը կարող է հարակից բարբառների ազդեցության հետևանք լինել³¹: Ինչևէ, դա առանձին քննության նյութ է: Մեզ համար կարևորն այն է, որ «Գանձի» աշխարհաբար նմուշներում **կու (կր)**-ով ձևերը գործածված են միայն ընդհանրական, սովորության ներկայի և պատմի իմաստներով, բայց ընթացքային ներկայի իմաստ չեն արտահայտում, իսկ **ում**-ով ձևերը գործածված են ընթացքային ներկայի իմաստով: Իմաստագործառնության այդպիսի բաշխումը վերը նշված տիպաբանական ընդհանուր օրինաչափությունների տեսանկյունից կասկած չի թողնում, որ տվյալ դեպքում գործ ունենք **կու (կր)**-ով երբեմնի բազմագործառնության ներկայի հետագա իմաստային սահմանափակման հետ: Նույնպիսի գործընթաց այս կամ այն չափով տեղի է ունեցել հայերենի նաև այլ տարածական տարբերակներում, որոնցում այժմ ներկայի հիմնական ձևերը դերբայավոր կառուցվածք ունեն, իսկ **կու (կր)**-ով ներկայի ձևերը՝ իբրև մնացորդային կիրառություններ, հանդես են գալիս ընդհանրական, սովորության և/կամ պատմական ներկայի իմաստով: Մինչնայն ժամանակ 17-18-րդ դդ. այլ գրավոր հուշարձանների լեզվական քննությունը թույլ է տալիս ենթադրել, որ **կու (կր)**-ով ներկայի ձևերի՝ աստիճանաբար նոր դերբայավոր ձևերով փոխարինման գործընթացը և, դրա հետ կապված, հին ու նոր ներկայի ձևերի իմաստագործառնության տեղաշարժերը հայերենի տարբեր տարածական տարբերակներում տեղի են ունեցել ոչ միաժամանակ և տարբեր չափով: Այսպես, Ս. Դաշտեցու բանաստեղծություններում, որոնք ժամանակագրորեն զուգահեռ են կամ մի քանի տասնամյակով նախորդում են «Գանձին», **ում**-ով ձևերը գործածված են ոչ միայն ընթացքային, այլև ընդհանրական, սովորության ներկայի իմաստով. հմմտ. «**Չար մարդն էստեղս ի՛նչ ուզում է, անում է**» (էջ 107, ընդհ., սվրթ. ն.): «**Մեկ պարզ ջուր այ, որ հանապազ մատնում այ**» (էջ 109, ընդհ., սվրթ. ն.) և այլն: Իսկ **կու (կր)**-ով ձևերը գործածված են ոչ միայն ընդհանրական, սովորության, այլև ընթացքային ներկայի իմաստով, հետևաբար դեռ լիովին իմաստագործառնության սահմանափակման չեն ենթարկվել. հմմտ. «**Խոջան ցաօք պարկած է, ժանկն կառնու պարկ կածէ**» («վերցնում, լցնում է պարկը» – Ս. Ա.). «**Մեր կանէ խետ մեծ իշին, Ձեռնէն բռնել պար կածէ**» («պարեցնում է» – Ս. Ա.)» (էջ 111), որտեղ գործ ունենք կոնկրետ իրադրությունում տեղի ունեցող ընթացքային ներկա գործողությունների հետ:

30 **Կատվայան Վ.**, Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր, Գիրք 1. Գեղարքունիքի մարզ, Եր., 2018, էջ 117: Հմմտ. նաև էջ 98:

31 Հմմտ. **Գևորգյան Գ.**, Հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգերի տարածագործառնական բնութագիրը, Եր., 2013, էջ 102-103:

Արդ, թեև դժվար է ստուգապես որոշել **ուսմ**-ով և **կու (կը)**-ով կազմությունների վերոնշյալ իմաստագործառնությանին փոփոխությունների կոնկրետ ժամանակը հայերենի առանձին տարածական տարբերակներում, բայց այդ գործընթացի ընդհանուր միտումն ակնհայտ է հայերենի պատմական զարգացման մեջ: Այդ առումով, օրինակ, Կ. Սարաֆյանի վերոնշյալ գրքում գետեղված զրույցների լեզուն արդեն զգալիորեն տարբերվում է ինչպես «Գանձի», այնպես էլ Ս. Դաշտեցու բանաստեղծությունների լեզվից (որոնց ժամանակագրորեն հաջորդում է ավելի քան վեց տասնամյակով), մասնավորապես՝ **ուսմ**-ով ներկայի ձևերն այստեղ արդեն բացարձակ մեծամասնություն են կազմում և գործածված են թե՛ ընթացքային ներկայի և թե՛ ընդհանրական, սովորությանին ներկայի իմաստով³²: Իսկ **կու (կը)**-ով ձևերը հիմնականում ապառնիի իմաստով են գործածված, և, ինչպես նշեցինք, մեզ հաջողվել է գտնել **կու (կը)**-ով ներկայի ընդամենը մեկ օրինակ՝ ընդհանրական ներկայի կիրառությամբ:

Եզրակացություններ

Այսպիսով՝ ամփոփելով վերը կատարված քննության արդյունքները՝ կարող ենք ասել հետևյալը: Հատկանշական է, որ արևելահայերենում, որտեղ ներկայի հիմնական ձևերն ունեն դերբայավոր կառուցվածք, **կու (կը)**-ով ձևերը, որպես կանոն, ընթացքային ներկայի իմաստ չեն արտահայտում, այլ ապառնիի իրենց բուն իմաստին զուգահեռ գործածվում են միայն պատմական, պատմողական և/կամ ընդհանրական, սովորությանին ներկայի իմաստով: Իմաստագործառնությանին այդպիսի բաշխումը տիպաբանական ընդհանուր օրինաչափությունների տեսանկյունից ակնհայտորեն վկայում է երբեմնի բազմագործառնույթ ներկայի հետագա իմաստային սահմանափակման մասին: Այսինքն՝ տիպաբանական տվյալները հաստատում են Հ. Աճառյանի այն վարկածը, որ հայերենի՝ այժմյան դերբայավոր ներկայի ձևեր ունեցող տարբերակներում ևս **կու (կը)**-ով ձևերը սկզբնապես գործառել են ներկայի բոլոր հիմնական կիրառություններով, այդ թվում՝ ընթացքային ներկայի իմաստով: Միևնույն ժամանակ 17–18-րդ դդ. տարբեր գրավոր հուշարձանների լեզվական քննությունը թույլ է տալիս ենթադրել, որ **կու (կը)**-ով ներկայի ձևերի՝ նոր դերբայավոր ձևերով փոխարինման գործընթացը և հին ու նոր ներկաների համապատասխան իմաստագործառնությանին տեղաշարժերը հայերենի տարբեր տարածական տարբերակներում տեղի են ունեցել ոչ միաժամանակ և տարբեր չափով:

³² Համապատասխան օրինակների համար տե՛ս Սարաֆյան Կ., նշվ. աշխ., հատկապես՝ էջ 245-247:

Սարգիս Ռ. Ավետյան – ԵՊՀ դոցենտ, հեղինակ է 1 մենագրության և 35 հոդվածների: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հնդեվրոպական լեզվաբանությունը, լեզվաբանական տիպաբանությունը, հայերենի պատմահամեմատական և տիպաբանական ուսումնասիրությունը, հին հայերենը, միջին հայերենը, հայերենի բարբառները, արևելահայերենը և արևմտահայերենը:

Էլ. հասցե՝ sargisavetyan@ysu.am

Summary

FORMATIONS WITH THE PARTICLE ԿՈՒ (ԿՐ) IN EASTERN ARMENIAN

A Synchronic and Diachronic Examination

Sargis R. Avetyan

Candidate of Sciences in Philology

Key words – the formations with the particle **կու (կր)**, the habitual and historical present meanings, Armenian dialects, residual uses, present tense forms involving the participle **-ում**, a progressive aspect form, typological evidence.

An attempt is made to show that typological evidence (namely, the patterns of the historical development of old presents) confirms H. Acharyan's hypothesis that the formations with the particle **կու (կր)**, which are commonly used with future meaning in Eastern Armenian, originally served functions of a standard present. Unfortunately, researchers, with a few exceptions, have not paid due attention to H. Acharyan's above remark. The existence of the present with the particle **կու (կր)** in Eastern Armenian either has been attributed to the influence from neighbouring dialects pertaining to the **Կր** branch, or has just been stated as a fact without any explanation. However, it is no accident that the old present formed with the particle **կու (կր)** does not typically express progressive meaning and is only used as a habitual and/or historical present in the Colloquial Eastern Armenian and a number of Armenian dialects, where the standard present (progressive in origin) involves a participle.

It is well established cross-linguistically that when a new progressive aspect form arises and becomes obligatory, the old present is often restricted to habitual (as well as historical present) and future meanings. Later the progressive may also be extended to the habitual use and become obligatory there too. When that happens, the old present becomes confined to the future meaning. On the other hand, the historical present meaning found in old presents is readily explained as an archaism that has been preserved in certain narrative genres. Particularly, folklore genres are generally conservative in this respect, so it is here that old presents tend to appear as narrative tenses even after the new formation (the new present) has ousted the old present tense from its central functions.

Therefore, the above typological evidence sheds new light on the historical relationship between the present tense forms involving the participle **-ում** and the formations with the particle **կո** (**կը**) as well as on their synchronic functional distribution in Eastern Armenian (the so-called **ում** branch). To put it another way, the habitual and historical present meanings of the formations with the particle **կո** (**կը**) in Eastern Armenian should be regarded as residual uses preserved from an erstwhile standard present. Besides, the examination of various written records of the 17th-18th centuries suggests that the functional-semantic replacement of the old present involving the particle **կո** (**կը**) by the new present tense involving the participle **-ում** has taken place at different rates in different territorial varieties of Eastern Armenian.

Резюме

ОБРАЗОВАНИЯ С ЧАСТИЦЕЙ ԿՈՒ (ԿՐ) В ВОСТОЧНОАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Синхроническое и диахроническое рассмотрение

Саргис Р. Аветян
Канд. филол. наук

Ключевые слова – образования с частицей **կո** (**կը**), значения хабитуалиса и исторического презенса, армянские диалекты, остаточные употребления, формы презенса, содержащие причастие **-ում**, аспектуальная форма прогрессива, типологические данные.

В статье предпринята попытка показать, что типологические данные (а именно, закономерности исторического развития древних презенсов) подтверждают гипотезу

тезу Г. Ачаряна о том, что образования с частицей **լոյ (լը)**, которые, как правило, употребляются со значением футурума в восточноармянском языке, первоначально выполняли функции «обычного» презенса. К сожалению, исследователи, за некоторым исключением, не уделяли надлежащего внимания указанной выше гипотезе Г. Ачаряна. Одни исследователи приписывали наличие презенса с частицей **լոյ (լը)** в восточноармянском языке влиянию соседних диалектов, принадлежащих к ветви **Չը**, другие просто констатировали этот факт без всяких пояснений. Однако неслучайно, что древний презенс, образованный с частицей **լոյ (լը)**, обычно не выражает значения прогрессива, а только употребляется как хаbitуалис и/или исторический презенс в разговорном восточноармянском языке и некоторых армянских диалектах, где «обычный» презенс содержит причастие.

На основе данных разных языков установлено, что когда возникает новая аспектуальная форма прогрессива и становится обязательной, древний презенс часто ограничивается значениями хаbitуалиса и футурума. В дальнейшем форма прогрессива может приобрести также значение хаbitуалиса, становясь обязательной и в этом употреблении. Тогда древний презенс ограничивается значением футурума. С другой стороны, значение исторического презенса, встречающегося в древних презенсах, легко объясняется как архаизм, сохранившийся в определенных нарративных жанрах. В частности, фольклорные жанры, как правило, являются консервативными в этом отношении, и именно здесь древние презенсы обычно выступают как нарративные времена даже после того, как новое образование (новый презенс) вытеснило древнее настоящее время из всех своих основных функций.

Таким образом, указанные выше типологические данные проливают свет на историческое взаимоотношение между формами презенса, содержащими причастие на **-ուլ** и образованиями с частицей **լոյ (լը)**, а также на их синхроническую функциональную дистрибуцию в восточноармянском языке (так называемой ветви **Ուլ**). Иначе говоря, значения хаbitуалиса и исторического презенса образований с частицей **լոյ (լը)** в восточноармянском языке следует рассматривать как остаточные употребления, сохранившиеся от бывшего «обычного» презенса. Кроме того, изучение разных письменных памятников XVII-XVIII вв. позволяет предположить, что функционально-семантическая замена древнего презенса с частицей **լոյ (լը)** новой формой настоящего времени, содержащей причастие на **-ուլ**, происходила с разной скоростью в разных территориальных разновидностях восточноармянского языка.

REFERENCES

1. **Abrahamyan R.**, Step'anos Dashtets'i, "Haykakan SSR Gitut'yunneri akademiayi teghekagir. Hasarakakan gitut'yunner", Yer., 1956, N 12, ėj 101-117 (**In Armenian**).
2. **Abrahamyan S. G., Paġnasyan N. A., Ohanyan H. A.**, Zhamanakakits' hayots' lezu, hat. 2, Dzevabanut'yun, Yer., 1974 (**In Armenian**).
3. **Achaġyan H.**, Liakatar k'erakanut'yun hayots' lezvi, hat. IV, B girk', Yer., 1961 (**In Armenian**).
4. **Avetisyan H.**, Grabari storadasakan yeghanakĕ yev nra ėmbrnumĕ hay k'erakanut'yan patmut'yan mej, "Banber Yerevani hamalsarani", Yer., 1985, N 1, ėj 193-204 (**In Armenian**).
5. **Aytĕnean A.**, K'nnakan k'erakanut'iwn ashkharhabar kam ardi hayerĕn lezui, Vienna, 1866 (**In Armenian**).
6. **Gevorgyan G.**, Hayereni barbaġneri yeghanakazhamanakayin hamakargerġ taratsagortsarakan bnut'agirĕ, Yer., 2013 (**In Armenian**).
7. **Gevorgyan G.**, Nerka zhamanaki patmakan zargats'man harts'i shurj, "Lraber" has. git., Yer., 1987, N 10, ėj 38-45 (**In Armenian**).
8. **Gharibyan A.**, Hay barbaġagitut'yun, Yer., 1953 (**In Armenian**).
9. **Ishkhanyan R.**, Nor grakan hayerenĕ XVII-XVIII darerum, Yer., 1979 (**In Armenian**).
10. **Jahukyan G.**, Hay barbaġagitut'yan neratsut'yun, Yer., 1972 (**In Armenian**).
11. **Jahukyan G.**, Hayots' lezvi tesut'yan yev patmut'yan himnaharts'erĕ, "Hamazgayin", 2000 (**In Armenian**).
12. **Katvalyan V.**, Bayazeti barbaġĕ yev nra lezvakan aġnch'ut'yunnerĕ shrjaka barbaġneri het, Yer., 2016 (**In Armenian**).
13. **Katvalyan V.**, Hayastani Hanrapetut'yan barbaġayin hamapatker, Girk' 1. Geghark'unik'i marz, Yer., 2018 (**In Armenian**).
14. **Kostandyan D.**, Nakhijevan, Shur'ut' gyugh, Hayereni barbaġagitakan atlasġ antip nyut'er, tetr 212 (**In Armenian**).
15. **Sarafean K.**, Girk' vor koch'i banali gitut'ean, Sanktpeterburg, 1788 (**In Armenian**).
16. **Yezeġyan L.**, Grakan ashkharhabarĕ yev arevelahay patmavepi lezun (19-rd dar), Yer., 1990 (**In Armenian**).